

ԱՅՑ ԲՈՄՈՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Մայիսի 10-ին, հինգշաբթի օրը, Բոմոնի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու թաղական խորհրդի հրավերով Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց տեղի հայ համայնքին, ուր արժանացավ բացառիկ ջերմ ընդունելության:

Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց եկեղեցի՝ ժողովրդական խանդավառ և սրտագին արտահայտությունների մեջ: Եկեղեցու շրջափակի արտաքին դռնից մինչև մուտքը փռված էին ուղեգորգեր՝ վարդերով և մեխակներով զարդարված: Եկեղեցու զանգերի ավետավոր ղողանջի ներքո Վեհափառ Հայրապետը մուտք գործեց եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ եկեղեցական կարճատև արարողություն, որի ավարտին եկեղեցու հոգևոր հովիվ տ. Մակար քհն. Նաճարյանը Վեհափառ Հայրապետին ողջունեց հետևյալ խոսքով.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր,

Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր,

Հարգելի ներկաներ,

Մայիսյան այս գեղեցիկ երեկո մեր սրտերը անհուն ուրախությամբ լեցվեցան, երբ Բոմոնի պատվարժան թաղականության խնդրանքին ընդառաջելով, Ամենայն Հայոց Հայրապետը՝ Վազգեն Ա, Իր շքախմբով հաճեցավ Իր օրհնաբեր այցելությունը ընծայել մեր շրջանի բարեպաշտ հայ ժողովուրդին: Ինչպե՞ս չուրախանանք, ինչպե՞ս չհպարտանանք, երբ մեր մեջ ունինք հայոց հնադարյան հավատքի սուրբ Կեդրոն և աստվածակառույց Էջմիածնի ոսկեբերան և շինարար ու իմաստուն Հայրապետը:

Այն, ինչ որ կտեսնենք այսօր, Վեհափառ Տեր, հրաշքի համահավասար երևույթ մըն է մեզի համար, որ հայոց այս համեստ մատուռը, իր հիմնադրութենեն 47 տարիներ ետքը, առաջին անգամ ըլլալով կվայելէ ներկայությունը իր ազգընտիր Հայրապետին: Ձերդ Սուրբ Օծության շնորհաբեր այցելությունը հոս, վստահ կրնաք ըլլալ, որ պիտի վերահաստատե երբեմնի եղբայրական և փոխադարձ սիրո փոխհարաբերությունները մեր թաղամասին մեջ, մասնավորաբար և ընդհանրապես՝ Մարսեյլի մեջ:

Դուք, Ամենայն Հայոց Վեհափառ Տեր, որ շարունակությունն եք մեր

երջանկահիշատակ 129 Հայրապետներուն, Դուք, որ Ձեր խոր իմաստությամբ և ազգասիրությամբ արժանացած եք հայ ժողովուրդի բոլոր խավերուն պաշտամունքի հավասարող հիացումին ու հարգանքին, Ձեր գահակալության շրջանին կատարած եք այնպիսի կոթողական գործեր և սրբազան ծառայություններ, որ հայ ժողովուրդի պատմության մեջ արդեն անցած եք անմահներու շարքին: Դուք, Վեհափառ Տեր, մեզի սորվեցուցիք զոհաբերության և ծառայության ստեղծագործ ոգին, որպեսզի շեն ու պայծառ մնա հայոց եկեղեցին, և հայ մարդիկ ուր որ ալ գտնվին՝ եղբայրանան իրարու հետ, հայոց եկեղեցվո շուրջ:

Վեհափառ Տեր, Դուք մեր աչքերուն առջև կներկայանաք որպես խաղաղության և սիրո առաքյալ մը: Պարգևեցեք մեզի խաղաղություն և համերաշխություն մասնավորաբար մեր շրջանին մեջ: Որպես հավատարիմ զավակները Ձերդ Վեհափառության, կմաղթենք Ձեզի, որ լուսո Արարիչը միշտ ծաղկյալ պահե Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը և երկար կյանք պարգևե Ձեզի:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, բարի եկաք Ձեր տունը: Օրհնեցեք մեզ, տվեք մեզի խաղաղություն և եղբայրասիրություն, որպեսզի Ձեր մեկնումեն ետքն ալ շարունակենք սիրել զիրար խաղաղության մեջ:

Կեցցե՛ Հայաստանը:

Կեցցե՛ հայ ժողովուրդը:

Կեցցե՛ ս. Աթոռը՝ Էջմիածին:

Կեցցե՛ մեր շինարար, իմաստուն, իրատես ու հեռատես Հայրապետը՝ Վազգեն Ա»:

Այնուհետև խոսք առավ Հայոց Հայրապետը և տվեց Իր օրհնությունը Բոմոնի հայ հավատացյալներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԲՈՄՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Գոհություն Աստուծո, որ Մեր քայլերը առաջնորդեց նաև դեպի այս եկեղեցին, ձեր այս աղոթքի տունը: Գոհություն Աստուծո, որ կհանդիպինք ձեզի բոլորիդ, հարազատ զավակները մեր եկեղեցվո և մեր ժողովուրդի:

Ձենք գիտեր ինչ բառեր օգտագործել, որպեսզի արտահայտենք Մեր գոհունակությունը և հոգեկան մխիթարությունը այս պահին համար, զոր Աստված Մեզ և ձեզ պարգևեց: Պահ մը՝ որուն շատոնց կսպասեինք: Եվ անավասիկ մենք միասին ենք: Մեզի համար, իբրև Հայոց Հայրապետ, չկա ավելի մեծ հոգեկան մխիթարություն, քան տեսնել համայն մեր ազգը, համայն մեր ժողովուրդը համախմբված մեր եկեղեցվո կամարներուն ներքև, միշտ կարոտ Աստուծո օրհնության, որ կբաշխվի մեզի ամենուս Մայր Աթոռ ս. Էջմիածնեն հազար յոթը հարյուր տարիներե ի վեր:

Ս. Էջմիածին Աստուծո կողմե պարգևված ընծա մըն է մեր ազգին, որպեսզի անով, գոնե անով մեր ժողովուրդը պահպանե իր հոգևոր և ազգային միասնությունը:

Դարերու ընթացքին մենք միշտ բաժան-բաժան ապրած ենք աշխարհագրականորեն: Միշտ գաղթականություններ ունեցած ենք, միշտ արտագաղթ թե՛ Արևելահայաստանեն և թե՛ Արևմտահայաստանեն: Պատմությունը երկար է մեր ողբերգական անցյալին: Սակայն այդ բոլոր ողբերգա-

կան և դժվարին պահերուն հայ ժողովուրդի զավակները, ուր որ գտնված են, միշտ իրենց հույսը, հավատքը, ներշնչանքը, ապագայի նկատմամբ իրենց լավատեսությունը պահպանած են շնորհիվ մանավանդ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո, ամենայն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությամբ:

Երբ 1960 թվականին առաջին անգամ Միացյալ Նահանգներ այցելեցինք, Հարվրդի համալսարանին մեջ ընդունելություն մը կազմակերպեցին ի պատիվ Մեզի, աքանչելի ճառեր խոսվեցան, բայց հատկապես աստվածաբանական ֆակուլտետի դեկանը, տնօրենը հոյակապ ճառ մը խոսեցավ և Մեզի նայելով բացագանչեց. «Երանի՜ ձեզի, որ Էջմիածին ունիք»: Մենք այդ պահուն սարսուռ զգացինք և մտածեցինք, թե ամերիկացի բարձր մտավորական հոգևորական մը, որ կյանքին մեջ Էջմիածին չէ տեսած, բայց ծանոթ է մեր պատմության, Էջմիածնի պատմության, ահա այդպես կարտահայտվեր: Մենք ալ Մեր պատասխան խոսքի մեջ հետևյալը ըսինք. «Մենք Էջմիածնեն կուգանք, սակայն կուզենք Ձեզի անկեղծորեն խոստովանիլ, որ Մենք ալ տակավին Էջմիածինը ամբողջապես չենք ճանչնար, կփորձենք զայն հետզհետե ավելի ճանչնալ, պեղելով մեր հոգեկան աշխարհը և մեր պատմությունը» :

Ահա այդ օրեն այս կողմ Մենք այն զգացումը ունինք, որ թեև արդեն քսանչորս տարի է այնտեղ ենք, ամեն օր ս. Էջմիածնի շրջափակի մեջ, մանավանդ երեկոները հանգիստ (Մենք քալել կսիրենք քիչ մը) կես ժամ, մեկ ժամ, ընդհանրապես մինակ, խորհրդավոր լուսնի լույսի տակ կշրջինք Մայր տաճարի շուրջ՝ միշտ դիտելով այդ հնադարյան հուշարձանը, Մեզի այնպես կուգա, որ ամեն օր նոր ապրում մը կունենանք, նոր զգացում մը կքաղենք այդ սնցած ծանր հնադարյան քարերեն: Հիրավի, հրաշքի համազոր աքանչելի իրողություն մըն է ս. Էջմիածնի գոյությունը մեր ազգի, մեր եկեղեցիի կյանքին մեջ դարերու ընթացքին, մինչև այսօր:

Անավասիկ այդ հնադարյան աղոթքի Տունեն, մեր հավատքի վեմեն, մեր ոգեկանության աղբյուրը հանդիսացող ս. Էջմիածնեն ձեզի ամենուդ կբերենք սիրո ողջույն և օրհնությունը Աստուծո:

Եվ Մեզի համար, սուրբ Էջմիածնի համար երբեք չկա և չի կրնար ըլլալ տարբերություն հայերու միջև: Ս. Էջմիածինը չի կրնար բաժնվիլ ոչ մեկ հայե, և ոչ մեկ հայ չի կրնար բաժնվիլ ս. Էջմիածնեն: Ձեր աչքերու հայացքեն, ձեր ժպիտեն, ձեր հուզումեն, ձեր արցունքներեն կզգամ, որ դուք ալ նույն քաղցր ապրումները ունիք այս պահուն:

Եկեք, սիրելի հավատացյալներ, միասին գոհություն տանք Աստուծո, որ արժանի ըրավ մեզ այս մխիթարական անուշ պահը ապրելու:

Մեր օրհնությունը Ձեզի, արժանապատիվ Տեր Հայր, և ձեզի՝ հոգաբարձության հարգարժան անդամներուդ ու ձեզի բոլորիդ, սիրելի հավատացյալներ: Եվ իբրև մշտական օրհնություն ս. Էջմիածնեն, կուզենք թողուլ ձեր այս Աղոթքի Տունին այս խաչքարը Հայաստանեն բերված:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսեանսդ». ամեն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈՄՈՆԻ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ

Այնուհետև եկեղեցու շենքին առընթեր հանդիսության սրահում Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Բոմոնի հայ հավատացյալների հետ:

Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությունը տեղի կրոնական ընկերակցության և թաղականության անունից ողջունեց Վաղարշակ Տեր-Վարդանյանը հետևյալ գրավոր ուղերձով.

«Վեհափառ Տեր,

Բոմոնի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո կրոնական ընկերակցության և թաղականության կողմե սրտագին բարի գալուստ կմաղթենք Ձերդ Սրբության և Ձեզի ընկերակցող շքախումբին ի Բոմոն: Ս. Ավետարանը կավետե. «Ո՞վ որ խնդրե, պիտի տրվի անոր, ո՞վ որ դուռը զարնե, պիտի բացվի անոր առջև»:

Վեհափառությանդ ներկայությունը և օրհնությունները Բոմոնի հայկական գաղութիս համար, մեր խնդրագիրը առ որ անկ է, ընդունվեցավ սիրով: Այս աղվոր կարգադրության համար կհայտնենք մեր շնորհակալությունները Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան Սրբազանին, Մարսիլիո Իր փոխանորդին՝ տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյան Սրբազանին, Պրադոյի Մայր եկեղեցվո պատվարժան հոգաբարձության և իր նախագահին՝ մեծահարգ տիար Արծրուն Զրբաշյանին:

Վեհափառ Տեր, այս հանդիսավոր պահուն մեր խոհերն ու մտածումները կերթան Ձեր նախորդներուն՝ ս. Էջմիածնի երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետներուն, որոնք կրցած են մշտավառ պահել հազարամյա ս. Լուսավորչի կանթեղը, «Եկեղեցին հայկական», հակառակ հայ ժողովուրդի գլխուն պայթած ահավոր աղետներուն, արշավանքներուն և փլուզումներուն դարերու ընթացքին: Կխոնարհինք իրենց մեծ իրագործումներուն և քաղցր հիշատակին առջև:

Վեհափառ Տեր, Ձեր գահակալության 24 տարիներու ընթացքին ծրագրյալ, հետևողական, Բանին զորությամբ կատարեցիք մեծ իրագործումներ, որոնք արժանի են մեծարանքի և հարգանքի: Լիբանանի ողբերգությունը ապրող աղետահար հայ ժողովուրդին Վեհափառությանդ, հայ պետության և ժողովուրդին եղբայրական լիաբուռն նյութական և բարոյական օգնությունը վեր է ամեն գնահատանքե, որ մեր սիրտերը կլեցնե անհուն երախտագիտությամբ:

Վեհափառ Տեր, որդիական անհուն սիրով կմաղթենք Ձեզի արևշատություն, քաջառողջ կյանք, հոգեկան և մտավոր բարձր տրամադրություն՝ մեր ազգային և եկեղեցական կյանքին մեջ տատանող նավը համերաշխ գործակցության և խաղաղության նավահանգիստը առաջնորդելու:

Վեհափառ Տեր, Ռաֆֆիի Խենթին եղազը իրականացած իրողություն է այսօր Հայաստանի մեջ՝ իր պետությամբ, իր կաճառով, համալսարանով, զանազան նվաճումներով: Արարատի ադամանդյա ծեր կատարին կայծակի սուրը դիպել ու անցել է:

Վեհափառ Տեր, կմաղթենք Ձեզի երկար, շատ երկար տարիներ՝ տեսնելու համար վեհափառ Արարատի վերադարձը իր իրավ տիրոջ՝ գերյալ քրիստոնյա հայ ժողովուրդին:

«Բայց ափսոս որ երազ էր». այս երգը շատ կխոսի մեր սրտին: Այնուամենայնիվ բոլոր մեծ իրագործումները իրականացած են տեսիլքով:

Վեհափառ Տեր, ս. Էջմիածին Ձեր վերադարձին մեր բարևագիր-ողջույնները հայտնեցեք Գերագույն հոգևոր խորհրդին և հայ ժողովուրդին: Ձեր աղոթքներուն և օրհնություններուն հետ բարի եղեք մեզ միշտ հիշել:

Հավետ ապրի «եկեղեցին հայկական» և իր Վեհապետը՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը»:

Հանդիպման ժամանակ Վեհափառ Հայրապետը ներկաներին դիմեց հետևյալ պատգամով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ԲՈՄՈՆԻ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

Սիրելի հավատացյալներ, Մեր սիրտը հպարտությամբ կլեցվի՝ լսելով ձեր պետական պատասխանատու անձնավորությանց գնահատանքը մեր ժողովուրդի զավակներու նկատմամբ, իբրև օրինապահ քաղաքացիները Ֆրանսայի. գնահատանք՝ իրենց բերած նպաստին համար երկրի տնտեսական, մշակութային, գիտական կյանքին: Ասիկա իրոք պատիվ կբերե ձեզի բոլորիդ, և Մեր առաջին խորհուրդը և հորդորը պիտի ըլլար ձեզի՝ միշտ հավատարիմ մնալ ձեր այս երկրորդ հայրենիքին և Ֆրանսացի ժողովուրդին: Հայկական ծանոթ առաքինություններեն մեկն է ասիկա ամեն տեղ, ուր հայերը ապրած են դարերու ընթացքին օտար երկիրներու մեջ, իբրև պանդուխտ ժողովուրդ: Այս է պատկերը հիմա մեր բոլոր գաղութներու կյանքին: Այս բարի ավանդությունը պետք է գիտնանք պահպանել, որպեսզի ամեն հայ հպարտությամբ կարողանա ըսել՝ Je suis Arménien, հպարտությամբ կարողանա իր եկեղեցին հաճախել, պահպանել իր ազգային ավանդությունները, իր լեզուն և իր կրթական, մշակութային ու բարեսիրական հաստատությունները, պահպանելով նաև իր հայրենաբաղձ ոգին դեպի մեր նախահայրերու հայրենիքը, դեպի հավիտենական Հայաստանը:

Եվ փառք Տիրոջը, որ այսօր գաղթաշխարհի հայությունը հզոր նեցուկ մը ունի իր ինքնությունը պահպանելու համար կրոնական և մշակութային տեսակետեն: Այդ՝ այսօրվան մեր վերածնած, ամեն օր աճող, զարգացող, ծաղկող երկիրն է, արդեն ավելի քան երեք միլիոն բնակչությամբ, որուն սուրբ հողին վրա խարսխված է Աստուծո տաճարը՝ Մայր Աթոռ ս. Էջմիածինը, դեմ հանդիման վեհափառ Արարատին: Ամեն անգամ, երբ վեհափառ անունը կլսեմ, կզգամ թե այն ինձի չի հարմարիր, այլ միայն Արարատին: Երբ բախտը ունենաք կապույտ, պայծառ երկնքի վրա տեսնելու երկու Մասիսները կողք-կողքի, չեք կրնար չհմայվիլ այդ իրապես վեհափառ տեսարանով: Արարատը գրեթե ամեն տեղե կերևա Հայաստանի մեջ, բայց ամենաաքանչելի տեսարանը կպարզվի Խոր Վիրապի վանքեն: Խոր Վիրապի վանքը սահմանի մոտ կգտնվի: Այս սահման բառը դժվարությամբ կարտասանեմ: Վանքը բարձունքի մը վրա կառուցված է, գրանիտյա ժայռի մը վրա, ուրկե ազատ աչքով կերևան սահմանի փշալարերը, և քիչ հեռու կսկսին բարձրանալ անագնածավալ զանգվածները Արարատներու: Հատկապես ձմեռը, հունվար-փետրվար ամիսներուն, երբ երկու Մասիսները ամբողջությամբ ծածկված կըլլան ձյունով, հսկայական այդ լեռները աղամանդի պես կփայլին արևի շողերուն տակ, և չես կրնար բաժնվիլ հմայիչ այդ տեսարանեն ու երբեք միտքեդ չանցնիր, որ Արարատը մեր սահմանեն անդին կգտնվի:

Քիչ առաջ հարգելի հայրենակիցը, ակնարկելով Արարատին, «Ափսո՜ս, որ երազ է», ըսավ: Ես համաձայն չեմ: Արարատի նկատմամբ երազ չկա, նույնիսկ հույս բառը չեմ ուզեր օգտագործել. Արարատի նկատմամբ

միայն հավատք կա: Իմ կաթողիկոսության երկրորդ տարին էր կարծեմ, և բուրդ ծեծողներու պետք ունեցանք: Քանի մը գյուղացիներ եկեր էին Էջմիածնի գյուղերեն, որպեսզի երկար ձողերով, հին ավանդական ձևով բուրդերը ծեծեն: Երեք ծերունիներ էին 70 տարեկանի շուրջ: Մոտեցա մեկուն և հարցուցի՝ «Հայրի՛կ, դու ո՞րտեղացի ես»: «Վանեցի եմ», պատասխանեց: «Օ՜, ըսի, Վանը հիշո՞ւմ ես»: «Անշուշտ կհիշեմ», ըսավ, «գաղթեցինք, եկանք, փրկվեցինք, ապրում ենք այստեղ»: Հարցուցի՝ «Հայրի՛կ, ե՞րբ պիտի վերադառնաս Վան»: Ծերունին երկար դիտեց ինձ և, հայացքը հորիզոնին, պատասխանեց. «Ես Վանը էլ չեմ տեսնի, իմ որդին էլ չի տեսնի, բայց իմ թոռը անպայմա՛ն կտեսնի»:

Կհավաստիացնեմ ձեզ, թե ինչպես ձեր հոգիներուն մեջ, այնպես ալ հայաստանցիներու սրտերեն, հոգիներեն ներս կենդանի է այս ապրումը, ամուր հավատքը, մեր բոլոր արդար իղձերու իրականացման իմաստով: Այդ ապրումը մանավանդ ամեն տարի ավելի ու ավելի կխորանա ապրիլ 24-ին, երբ բոլոր երևանցիները Ծիծեռնակաբերդ կբարձրանան: Հարյուր հազարներ, առավոտեն մինչև գիշեր: Պետությունն ալ իր հարգանքի տուրքը կբերե առավոտուն ժամը 10-ին, իսկ ժամը 11-ին մենք կերթանք մեր միաբանությամբ և հանդիսավոր հոգեհանգիստ կկատարենք: Աննման հոգեկան վիճակ մը ստեղծված է Հայաստանի ժողովուրդին մեջ այս տեսակետեն: Երբեմն աջեն-ձախեն մեզի խորհուրդ տվողներ կըլլան, որ ողբերգական անցյալը մոռնանք: Անհնար բան է, որ հայ ժողովուրդը իր նահատակները մոռնա: Քրիստոնեական խիղճը, մարդկային արդարության ոգին, մեր ազգային արժանապատվության զգացումը կթելադրեն մեզի, ամեն բանե վեր, սուրբ պահել մեր անմեղ նահատակներու հիշատակը:

Սիրելի ժողովուրդ, մենք այնտեղ այս հավատքով կաշխատինք, և համոզումով, որ առաքելություն մը կկատարենք մեր եկեղեցիով, ս. Էջմիածնով: Առաքելություն մը թե՛ հոգևոր-դաստիարակչական իմաստով և թե՛ ազգային-հայրենասիրական իմաստով: Այդ է եղած միշտ ս. Էջմիածնի դերը, առաքելությունը դարերու ընթացքին:

Կմնա, որ մենք աղոթենք աշխարհի խաղաղության համար, որպեսզի նոր համաշխարհային բռնկումներ չմոտենան հազիվ մահվան անդունդեն փրկված մեր հայրենիքի սահմաններուն: Եվ աշխատինք զորացնել, հետզհետե ավելի զորացնել այն, ինչ որ մեզի մնաց:

Կեցցե՛ մեր սուրբ եկեղեցին, կեցցե՛ հայ ժողովուրդը: